ԴԱՍ 5

ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

Այս դասը կազմված է 4 հատվածներից *(մոտիվացնող ներածական տեսանյութ, դասի տեսական նյութ, բառարան և ինքնաստուգիչ հարցեր), որի ընդհանուր տևողությունն է 240 րոպե։*

Սույն հեռաուսուցման դասի այս հատվածը յուրացնելու համար հարկավոր է 145 րոպե։

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս փաստաթղթում։ Դրանք առանձին փաստաթղթերով ներկայացված են հեռաուսուցման փաթեթում։

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում)

Կարդացեք սույն դասի տեքստը և այն յուրացնելուց հետո միայն անցեք դասի հաջորդ մասերին (բառարան, ինքնաստուգիչ հարցեր):

Նախորդ դասին Ձեզ ներկայացրել ենք, թե վճիռների կատարման գործում ինչ դեր, ազդեցություն և գործիքակազմ ունի ՄԻԵԴ-ը: Խոսել ենք վճիռների կատարման գործում Մարդու իրավունքների նիստերի նշանակության և Նախարարների կոմիտեի՝ այդ նիստերի միջոցով վերահսկման հնարավորությունների մասին: Բացի դրանից, առանձին անդրադարձել ենք Նախարարների կոմիտեի ռեզոլյուցիաներին ու որոշումներին և ցույց ենք տվել, թե որն է ՄԻԵԴ վճիռների կատարման գործում միջազգային այդ հաստատության ընդունած փաստաթղթերի կարևորությունը:

Վերջին՝ հինգերորդ դասի շրջանակում, նախ, ընդհանուր գծերով ներկայացվելու է Հայաստանում ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի վիճակը: Խոսելու ենք վճիռների կատարման գործընթացում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների դերի մասին և ցույց ենք տալու, թե որն է Գլխավոր դատախազության դերակատարումն այդ գործընթացում: Առանձին անդրադառնալու ենք տվյալ գործընթացին մարդու իրավունքների ազգային հաստատությունների (Հայաստանի մասով՝ Մարդու իրավունքների պաշտպանի) մասնակցության և քաղաքացիական հասարակության ներգրավվածության հարցերին: Եվ վերջում ընդգծելու ենք ՄԻԵԴ-ում Հայաստանի շահերը ներկայացնող մասնագիտացված մարմնի դերի կարևորությունը և խոսելու ենք իրավասու մարմինների միջև փոխգործակցության շուրջ:

5.1 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Որքան զարգացած են ՄԻԵԴ վճիռների կատարման կառուցակարգերը ԵՄ անդամ պետությունում, այնքան մեծ է տվյալ երկրում եվրոպական իրավական չափանիշների ներքո մարդու իրավունքների ապահովման գործիքակազմի շրջանակը: **Այս առումով՝ ՄԻԵԴ վճիռների արդյունավետ կատարումը ոչ միայն կարևոր է Հայաստանի Հանրապետության համար, այլև հեռանկարային է մարդու իրավունքների պաշտպանության (protection) և խթանման (promotion) տեսանկյունից:** Ներպետական մակարդակում ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթ-

թացի արդյունավետ զարգացումը մեծամասամբ պայմանավորված է երկու զուգահեռ հանգամանքներով: Նախ, պետք է ուշադրության կենտրոնում պահել և առաջնորդվել Նախարարների կոմիտեի ընթացակարգերով/աշխատանքային մեթոդներով: Բացի դրանից, ոչ պակաս կարևոր է ազգային իշխանությունների տեսլականը, այսինքն՝ այն, թե կոնկրետ իրավիճակում պետությունն ինչպես է տեսնում վճիռներով արձանագրված խնդիրների լուծման առաջնահերթություններն ու ռազմավարական քայլերի հերթականությունը:

Հանրային իշխանության մարմինները միշտ չէ, որ մարդու իրավունքների խնդիրները տեսնում են նույն դիտանկյունից: Նրանց տեսակետները, որպես կանոն, սահմանափակվում են կառավարման համակարգում իրենց սեփական դերի ու իրավասության գնահատմամբ:

Օրինակ, դատական համակարգը, սովորաբար, իր ուշադրությունը սահմանափակում է արդար դատաքննության և իրավական պաշտպանության հետ կապված խնդիրների վերհանմամբ և ուսումնասիրությամբ: Իսկ, ասենք, դատախազությունն առավելապես հետաքրքրված է լինում քրեական գործերի քննության խնդիրներով և այլն:

Այնուամենայնիվ, երկուսն էլ կարող են չտեսնել մարդու իրավունքների խախտումների կապը ընդհանուր արմատական պատճառների հետ, ինչպիսիք են, օրինակ, իրենց համակարգերում թերի վարչարարությունը, անիրավաչափ պրակտիկան կամ լիարժեք հաշվետվողականության պակասը (դեֆիցիտը):

Հատկանշական է, որ ՄԻԵԴ վճիռների կատարման իրավական ապահովումը Հայաստանում իրացված է բավարար մակարդակով: Մասնավորապես՝ ընդունվել են մի քանի իրավական ակտեր, այդ թվում՝ օրենք և կառավարության ու վարչապետի որոշումներ, որոնք ամրագրել են ՄԻԵԴ վճիռների կատարման հետ կապված անհրաժեշտ կարգավորումները: Այստեղ կարևոր է նշել նաև «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1443 Ա որոշումը. դրանով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որի առանցքային նպատակն է համակարգել Կոնվենցիայով պետության ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացման աշխատանքները:

Այս ամենը և հետագա քայլերը պետք է ինստիտուցիոնալ մակարդակի վրա դնեն իրավասու բոլոր մարմինների **բաշխված պատասխանատվության** (shared responsibility) լիարժեք ապահովումը:

5.2 ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դասերից մեկում ԵԽ քաղաքական հռչակագրերի վերլուծության հիման վրա ամփոփել ենք մի քանի եզրահանգումներ, որոնք կարևոր են վճիռների կատարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից: Ներպետական կառուցակարգերի արդյունավետության բարձրացման համատեքստում առանձնացնենք դրանցից երեքը.

- աջակցել վճիռների կատարման գործընթացը համակարգող մարմնին (Հայաստանում այս դերը վերապահված է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչին), կատարելագործել նրա և նրա գրասենյակի գործիքակազմը, զարգացնել կարողությունները,
- հաղթահարել բարդ բնույթի վճիռները մեկնաբանելու դժվարությունները՝ վեր հանելու պահանջվող միջոցները (հատկապես՝ ընդհանուր միջոցները) և/կամ բացահայտելու պրակտիկայի խոչընդոտները,
- գործընթացին ներգրավել դատական համակարգի մարմիններին, ապահովել խորհրդարանի անմիջական ներգրավվածությունը և պատգամավորների մաքսիմալ հետաքրքրությունը:

Ինչպես նկատեցիք՝ փաստացի պահանջվում է պետական իշխանության բոլոր թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ուղղակի ներգրավվածությունը:

Հավանաբար Դուք նկատել եք, որ Բրյուսելի հռչակագրում, ի թիվս այլնի, ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում ընդգծվել է խորհրդարանի և դատավորների ներգրավվածության կարևորությունը:

Կարդացեք Բրյուսելի հռչակագիրը և պատասխանեք, թե այս առումով ինչ կոնկրետ ուղերձներ է պարունակում հռչակագիրը (հասանելի է https://bit.ly/3KYOorr հղումով):

ՕՐԻՆԱԿ.

Օրենսդիր իշխանությունը ՄԻԵԴ վճիռների կատարմանը հիմնականում մասնակցում է ընդհանուր միջոցների ապահովման ճանապարհով՝ օրենսդրության բացը լրացնելով, նոր օրենք ընդունելով և այլն: Կան պետություններ, որտեղ խորհրդարանը նաև մշտադիտարկում է իրականացնում կատարման գործընթացի նկատմամբ, այդ թվում՝ գործադիր մարմնից պահանջելով հաշվետվություններ: Խորհրդարանական օղակը լավ հարթակ է վճիռների կատարման համատեքստում միջազգային և եվրոպական իրավական չափանիշների արդյունավետ ներդրման համար՝ նաև հանրային իրազեկման ու կրթական բաղադրիչի ներդրման տեսանկյունից:

Գործադիր իշխանությունը, կարելի է ասել, ամենագլխավոր պատասխանատուն է ՄԻԵԴ վճիռները լիարժեք և արագ կատարելու գործում, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնությունների, պրակտիկայի վերանայման, արդարացի փոխհատուցման վճարման, ազատազրկման վայրերի պայմանները բարելավելու միջոցով:

Գործադիրն է ներկայացնում կոնկրետ վճռի մասով գործողությունների ծրագրեր և գործողությունների հաշվետվություններ (զեկույցներ), պետության դիրքորոշումը ներկայացնում է Նախարարների կոմիտե և այլն: Ավելին՝ այն նաև ապահովում է վճիռների կատարման գործընթացի համակարգումը (դրա մասին խոսվելու է վերջին ենթաթեմայի շրջանակում):

Դատական իշխանությունն էլ, սովորաբար, պատասխանատու է դատական պրակտիկայի համար: Երբեմն ՄԻԵԴ վճիռների կատարումն անպայմանորեն ենթադրում է ներպետական դատական վարույթների վերաբացում, երբ պետք է նախկինում լուծում ստացած խնդիրը նորից քննվի՝ արդեն վճռում արձանագրված նոր չափանիշների լույսի ներքո: Այստեղ դատարանի գործն իրապես կարևոր է, քանի որ երբեմն վերաբացումն է restitutio in integrum-ի ամենաարդյունավետ, իսկ երբեմն՝ միակ ճանապարհը: Դրա հետ մեկտեղ, երկրում իրավական համակարգի առանձնահատկություններով պայմանավորված, դատական իշխանությունը կարող է ազդել նաև օրենսդրության զարգացման վրա:

Պետք է նկատել, որ կարևոր է ինչպես իշխանության այս երեք թևերի, այնպես էլ մյուս պետական մարմինների մասնակցությունը՝ հատկապես, եթե նրանց գործառույթներով է պայմանավորված ՄԻԵԴ վճիռների կատարումը: **Այս առումով՝ Հայաստանում դժվար է գերագնահատել Գլխավոր դատախազության դերակատարումը, որի մասնակցությունը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին առանցքային նշանակության է:**

Ի ԴԵՊ.

Սահմանադրական լիազորությունների շրջանակով պայմանավորված՝ Հայաստանում դատախազության դերը քրեական քաղաքականության մշակման և իրականացման գործում ղեկավար բնույթի է: Պետական շահերի պաշտպանության հայց դատարան հարուցելու դատախազության բացառիկ լիազորությունն էլ մեծացնում է Հայաստանի վերաբերյալ կայացված ՄԻԵԴ վճիռների կատարման գործում նրա մասնակցության հնարավորության շրջանակը:

Այստեղ նաև հավելենք, որ, ինչպես Ձեզ արդեն ներկայացրել ենք նախորդ դասին, Եվրոպայի խորհրդի կանոնադրության (Statute) համաձայն՝ Նախարարների կոմիտեի խնդիրներից է, քննել ԵԽ-ի նպատակի իրագործմանն ուղղված միջոցառումները, ներառյալ՝ կոնվենցիաների/համաձայնագրերի կնքումն ու առանձնահատուկ հարցերի վերաբերյալ պետությունների կողմից ընդհանուր քաղաքականության ընդունումը: Եվ կարևոր է նշել, որ Նախարարների կոմիտեն իր գործառույթներն իրականացնում է ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ «[ԵԽԽՎ-ի] առաջարկությամբ» (Հոդված 15):

ՄԻԵԴ վճիռների կատարման վերաբերյալ կարևոր են ԵԽԽՎ-ի թիվ 2178(2017) բանաձևը և թիվ 2110(2017) հանձնարարական-առաջարկությունը, որոնց հղումները Դուք կարող եք գտնել այս դասի «ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ» մասում:

Կարդացեք տվյալ փաստաթղթերը և պատասխանեք հետևյալ հարցին՝ 1) ԵԽԽՎ-ն իր բանաձևում ի՞նչ ճանապարհ է առաջարկվում ԵԽ անդամ պետություններում «քաղաքական կամքի» (political will) բացակայության կամ նվազման հետ կապված խնդիրների հաղթահարման համար, 2) ԵԽԽՎ-ն իր հանձնարարական-առաջարկությունում ի՞նչպես է տեսնում ներպետական մակարդակում ՄԻԵԴ վճիռների արագ և արդյունավետ կատարման մեխանիզմների զարգացման լուծումը:

ԵԽԽՎ-ն ընդունել է կարևոր բանաձևեր (resolutions) և հանձնարարական-առաջարկություններ (recommendations)՝ նվիրված ՄԻԵԴ վճիռների կատարման վիճակին և դրա կառուցակարգերի զարգացմանը: Եվ հիմնական շեշտադրումները, որոնք արվում են դրանցում, ներպետական մակարդակում կառուցակարգերն է՛լ ավելի զարգացնելու և դերակատարների ներգրավումը բարձրացնելու մասին են:

5.3 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2018 թվականին ընդունված Կոպենհագենի հռչակագիրն ընդգծել է, որ ՄԻԵԴ վճիռների արդյունավետ կատարումը ենթադրում է ներպետական գործող անձանց լայն շրջանակի ներգրավում, ինչը հնարավոր կդարձնի, որ ներպետական հարթությունում օրենսդրությունը և գործնականում դրանց ու այլ միջոցների կիրառումը համահունչ լինեն Կոնվենցիայի պահանջներին: Ընդ որում՝ խոսքն այստեղ չի վերաբերում միայն գործադիր մարմիններին, խորհրդարանականներին, դատավորներին կամ դատախազներին. խոսքը նաև **մարդու իրավունքների ազգային հաստատությունների** *և* **քաղաքացիական հասարակության** (civil society) մասին է:

Հատկանշական է, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունները և քաղաքացիական հասարակությունն այսօր հաճախ են ներգրավվում ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին: Նրանք կարող են դա անել տարբեր եղանակներով, ընդ որում՝ ցանկացած գործով և վճռի կատարման ցանկացած ժամանակ: Օրինակ՝ մարդու իրավունքների ազգային հաստատությունը (Հայաստանում՝ Մարդու իրավունքների պաշտպանն է) կարող է մասնակցել պետական մարմինների քննարկումներին կամ սեփական

նախաձեռնությամբ կազմակերպել նման քննարկումներ և ներկայացնել համապատասխան առաջարկներ: Քաղաքացիական հասարակությունն էլ կարող է մշտադիտարկման ներքո պահել վճիռների կատարման ներպետական գործընթացները:

Նրանք նաև ունեն հավելյալ գործիք, որը նախատեսված է Նախարարների կոմիտեի կանոններով: Մասնավորապես, Կանոն 9-ը սահմանում է, որ անձինք/տուժածները, այսինքն՝ նրանք ովքեր խախտման հետևանքով տուժել են (injured party), հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև մարդու իրավունքների ազգային հաստատությունները և միջազգային կազմակերպություններն իրավունք ունեն Նախարարների կոմիտե ներկայացնել հատուկ դիրքորոշում կամ տեղեկանք/կոմունիկացիա (communication)՝ աջակցելու համար կատարման գործընթացին:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության համար այդ կոմունիկացիան, կամ ինչպես ընդունված է անվանել՝ «**Կանոն 9 կոմունիկացիա**» (Rule 9 communication), լավագույն գործիքներից է: Առաջին անգամ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը Կանոն 9 կոմունիկացիա է ներկայացրել 2018 թվականին՝ մի գործով, որը վերաբերում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին:

ՕՐԻՆԱԿ.

Մուրադյանն ընդդեմ Հայաստանի (Muradyan v. Armenia) վճռի կատարման շրջանակում Նախարարների կոմիտե ներկայացված Կանոն 9 կոմունիկացիայով Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ դիրքորոշում է ներկայացրել երկու առանցքային խնդիրների վերաբերյալ, որոնք սկզբունքորեն կարևոր են զինված ուժերում օրինականության սկզբունքի և մարդու իրավունքների երաշխիքների փաստացի ապահովման տեսանկյունից՝ ա) քաղաքացիական վերահսկողության կառուցակարգերի զարգացում, բ) բանակում իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահության ամրապնդում:

Կարդացեք Մուրադյանն ընդդեմ Հայաստանի վճիռը և պատասխանեք, թե, Ձեր կարծիքով, որոնք են հրատապ ապահովում ենթադրող անհատական և ընդհանուր միջոցները (հայերենով վճռի հղումը հասանելի է https://bit.ly/3ysMsF6 հղումով:

Մեկ այլ գործով Մարդու իրավունքների պաշտպանը Կանոն 9 կոմունիկացիա է ներկայացրել որպես *կանխարգելման ազգային մեխանիզմ (NPM)*: Դրանում բարձրացված խնդիրների լուծումը և ներկայացված առաջարկությունների կատարումը կարևոր են վճռի կատարման ընդհանուր միջոցների ապահովման տեսանկյունից:

ՕՐԻՆԱԿ.

Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (Ashot Harutyunyan v. Armenia) վճռի կատարման շրջանակում 2019 թվականին Նախարարների կոմիտե ներկայացվել է հատուկ դիրքորոշում, որում բարձրացվել են ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական օգնության հետ կապված խնդիրներ՝ հիմնված Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքների վրա:

Կարդացեք Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի վճիռը և պատասխանեք, թե, Ձեր կարծիքով, որոնք են հրատապ ապահովում ենթադրող անհատական և ընդհանուր միջոցները (հայերենով վճռի հղումը հասանելի է https://bit.ly/3ss6fk8 հղումով:

Կանոն 9 կոմունիկացիաներ Նախարարների կոմիտե կարող են ներկայացնել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Հասարակական կազմակերպությունները հաճախ են ներկայացնում այս կամ այն խնդրին վերաբերող դիրքորոշումներ՝ պաշտպանելու համար իրավախախտման զոհերին/տուժածներին կամ ընդհանրապես խթանելու համար մարդու իրավունքները Հայաստանում: Այդ կոմունիկացիաները լայնորեն հաշվի են առնվում Նախարարների կոմիտեի կողմից՝ որպես իրավիճակի ճիշտ գնահատման այլընտրանքային տեղեկատվական աղբյուր:

Ի ԴԵՊ.

2020 թվականին առաջին անգամ Հայաստանից Նախարարների կոմիտե ներկայացվել է համատեղ Կանոն 9 կոմունիկացիա՝ Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանի հելսինկյան կոմիտեի կողմից: Այն առնչվում է Պողոսյանն ընդդեմ Հայաստանի խմբին (Poghosyan v. Armenia group), որում նշված պետական հաստատությունը և հասարակական կազմակերպությունը բարձրացրել են անձին ազատությունից զրկելու հետ կապված խնդիրներ:

Կարդացեք Պողոսյանն ընդդեմ Հայաստանի խմբի մասով ներկայացված համատեղ Կանոն 9 կոմունիկացիան և պատասխանեք հետևյալ հարցերին՝ 1) ո՞րն է վճիռների խմբի բուն խնդիրը, 2) ի՞նչ խնդիրների վրա են ուշադրություն դարձրել կոմունիկացիայի հեղինակները (հասանելի է https://bit.ly/39HBD7K հղումով):

5.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄՅՈՒՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵԽ անդամ պետություններում վճիռների կատարման բեռը սովորաբար դրվում է ՄԻԵԴ-ում կառավարության ներկայացուցչի (Government agent) վրա: Մասնագիտացված ստորաբաժանման աջակցությամբ՝ այդ պաշտոնյան ներկայացնում է գանգատների վերաբերյալ կառավա-

ության դիրքորոշումները, կազմակերպում է պետության վերաբերյալ կայացված ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացը: Հայաստանում այդ դերը վերապահված է **Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչին (Ներկայացուցիչ):**

Ներկայացուցիչն ունի գրասենյակ, որը մասնագիտացված ստորաբաժանում է ՀՀ վարչապետի աշխատակազմում: Գրասենյակը կառավարում է Վարչապետը, նրա գործունեությունը համակարգում և վերահսկում է Ներկայացուցիչը, ղեկավարում է Գրասենյակի ղեկավարը, ով ի պաշտոնե Ներկայացուցչի տեղակալն է: Գրասենյակն ունի կառուցվածքային մի քանի ստորաբաժանումներ, այդ թվում՝ վճիռների կատարման հարցերով զբաղվող վարչություն: ՄԻԵԴ-ում Հայաստանի ներկայացուցչությունն ունի ինտերնետային պաշտոնական կայք (echr.am), որը կարևոր գործիք է նաև վճիռների կատարման գործի համար:

Ներկայացուցչի և նրա գրասենյակի գործունեության վերաբերյալ գործում են անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ: Մասնավորապես, ընդունվել են «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի մասին» 2019 թվականի հուլիսի 10-ի ՀՀ օրենքը (2021 թվականի դեկտեմբերի 16-ի օրենսդրական փոփոխությունից հետո՝ «Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի մասին» օրենք), «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1289 Լ որոշումը, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1181-Լ որոշումը:

Կարդացեք նշված իրավական ակտերը և դուրս բերեք այն դրույթները, որոնցով ապահովվում է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի համակարգող դերակատարումը (իրավական ակտերը հասանելի են Հայաստանի իրավական տեղեկատվական arlis.am համակարգում):

Օրենսդրությամբ տրված գործիքակազմը լայն հնարավորություն է տալիս ապահովել և տեսանելի ու վերահսկելի դարձնել Հայաստանում ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացը (ընդ որում՝ թե՛ մասնագիտական որակի առումով, թե՛ քաղաքական բարձր մակարդակում), ինչպես նաև զարգացնել Ներկայացուցչի և իրավասու մյուս մարմինների միջև անհրաժեշտ **փոխգործակցությունը (interaction):**

Այլ կերպ՝ ներպետական իրավակարգավորումները հիմք են տալիս պնդելու, որ ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում Ներկայացուցչի ինչպես դե յուրե, այնպես էլ դե ֆակտո համակարգող (կոորդինացիոն) դերակատարման համար կան բավարար հիմքեր: **Իսկ ամուր հիմքերի վրա հենված համակարգող դերակատարումն ունի առանցքային նշանակություն ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում Ներկայացուցչի և իրավասու մյուս**

մարմինների արդյունավետ փոխգործակցության համար:

Այս իմաստով՝ ՄԻԵԴ վճիռների կատարումն ապահովելու համար զգալի նշանակություն ունի ներպետական մարմինների, մասնավորապես՝ Ներկայացուցչի և մյուս իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների բաշխված պատասխանատվությունը: Եվ այստեղ է, որ հատկապես կարևորվում է դատարանների ու դատախազության՝ որպես կոնկրետ ոլորտի քաղաքականություն մշակող/ապահովող սահմանադրական մարմինների դերը:

Փոխգործակցության համա-տեքստում կարևոր գործոն կարող է լինել 2021 թվականի դեկտեմբերին ստեղծված Միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը: Դրա կազմում ընդգրկված են իրավասու բոլոր այն մարմինները, որոնք անմիջական ու առանցքային անելիք ունեն ՄԻԵԴ վճիռների կատարման գործում և կրում են պետության ստանձնած պարտավորությունների կատարման համար պատասխանատվության սեփական բաժինը:

Կարդացեք նշված իրավական ակտը (հասանելի է Հայաստանի իրավական տեղեկատվական arlis.am համակարգում) և պատասխանեք հետևյալ հարցին՝ արդյո՞ք Միջգերատեսչական հանձնա-ժողովն ամբողջական կազմով է լսում քննարկման ենթակա բոլոր հարցերը:

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 50 րոպե:

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին (կոնցեպտներին), իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

ԲԱՌԱՐԱՆ

Մարդու իրավունքների նիստեր

(այլ կերպ՝ CM-DH հանդիպումներ) ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակում Նախարարների կոմիտեին վերապահված գործիք, որը Նախարարների տեղակալների մասնակցությամբ նիստերի ձևաչափով անցկացվում է առնվազն տարին չորս անգամ և որտեղ քննարկվում են Եվ անդամ պետությունների կողմից վճիռների կատարմանն առնչվող հարցեր:

Բաշխված պատասխանատվություն

հայեցակարգ, որը միջազգային հարթությունում նպատակ ունի ապահովել Կոնվենցիոն համակարգում ազգային ու եվրոպական հարթությունների հավասարակշռությունը և երաշխավորված պաշտպանել ներպետական մակարդակում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, իսկ ներպետական համատեքստում ապահովում է պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, ներառյալ՝ ՄԻԵԴ վճիռների կատարման գործում պետության իրավասու մարմինների միջև պարտականությունների բաշխվածությունը:

Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

(մինչև 16.12.2021 թ. օրենսդրական փոփոխությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ) վարչապետի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկված պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձ, որի գործունեությունն ընդգրկում է՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Արդարադատության միջազգային դատարանը, միջազգային արբիտրաժը, հաշտարարությունը և օտարերկրյա դատարանները:

Քաղաքացիական հասարակություն	պետական իշխանությունից անկախ քաղաքացիների ամբողջություն/համակարգ կամ անձանց միջև գոյություն ունեցող տնտեսական, մշակութային, իրավական և քաղաքական զարգացած փոխհարաբերություններով ժողովրդավարական հասարակություն, որը պետական իշխանության մարմինների ուղղակի միջամտությունից պաշտպանված է օրենքով:
Կանոն 9 Կոմունիկացիա	հատուկ դիրքորոշում կամ գրավոր տեղեկանք (կոմունիկացիա), որը որոշակի խումբ անձինք/տուժածներ, նրանց իրավախորհրդատուներ, մարդու իրավունքների պաշտպանությամբ և խթանմամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև մարդու իրավունքների ազգային հաստատություններն ու միջազգային կազմակերպությունները (կամ դրանց մարմինները կամ գործակալությունները) ներկայացնում են Նախարարների կոմիտե՝ կոնկրետ վճռի կամ վճիռների խմբի կատարման շրջանակում:
Կանխարգելման ազգային մեխանիզմ	Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվեն-ցիայի կամընտիր արձանագրության ներքո գործող հաստատությունը, որի նպատակն է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելումն ազատությունից զրկման վայրերում (Հայաստանում այդ դերը վերապահված է Մարդու իրա-վունքների պաշտպանին):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Կարդացեք լրացուցիչ նյութերը՝ որքանով հնարավորություն է տալիս օտար լեզվի Ձեր իմացությունը: Սա չի նշանակում, որ առանց տվյալ նյութերի ընթերցման հնարավոր չէ լիարժեք յուրացնել դասի բովանդակությունը, բայց նշված լրացուցիչ աղբյուրները կօգնեն առավելապես պատրաստված լինել մյուս դասերին, ինչպես նաև վեր հանել նոր հարցեր և մտածել դրանց շուրջ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Եվրոպայի խորհրդի կանոնադրություն (հայերենով տեքստը հասանելի է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում) — Կանոնադրությունն ընդուն- վել է 05.05.2022 թ., Հայաստանում ուժի մեջ է մտել 25.01.2001 թ.:	**https://www.arlis.am**
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը Ձեռնարկ ՀԿ-ների, տուժածների և նրանց իրավախորհրդատուների համար, — Ձեռ-նարկը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին ներգրավվում են Կանոն 9 կոմունիկացիաների միջոցով:	**https://bit.ly/3I5N4sc**
The implementation of judgments of the European Court of Human Rights, PACE Resolution 2178(2017), — ԵԽԽՎ-ի սույն բանաձևը (ռեզոլյուցիան) վերաբերում է ՄԻԵԴ վճիռների կատարմանը:	**https://bit.ly/3FyG3Ka**
The implementation of judgments of the European Court of Human Rights, PACE Recommendation 2110(2017), — ԵԽԽՎ-ի սույն հանձնա-րարական-առաջարկությունը (ռեկոմեն-դա-ցիան) տրվել է Նախարարների կոմիտեին և վերաբերում է ՄԻԵԴ վճիռների կատարմանը:	**https://bit.ly/3w3M1Q0**